

Այունյաց երկիր

www.syuniacyerkir.am

ՈՒՐԵԱԹ
23 ՀՈՒՆՎԱՐԻ 2015Թ. №2 (345)

Նորից եկել հին ցավերն են մեզ խոցում (Խույ սնֆոց են լսում հեռու Դեր-Չորից): Եվ մեզ վրա մահն իր ուժերն է փորձում Եվ դողում են մահվան ձեռքեր Գորից: ՀԱՍՈ ՍԱՀՅԱՆ



Մեկնարկել է սրտի անհետաձգելի վիրահատության ծրագիրը

Ստողապահություն

2015թ. հունվարի 1-ից մեկնարկել է սրտի անհետաձգելի վիրահատության ծրագիրը: Այն Հայաստանի Հանրապետության նախագահի նախընտրական ծրագրի դրույթներից է:

Նախարար Արմեն Մուրադյանի խոսքով՝ այս ծրագիրը ոչ միայն առողջապահական, այլև սոցիալական նշանակություն ունի եւ մեծ պատասխանատվություն է պարտադրում:

Ծրագրի նպատակն է սուր ինֆարկտի ծանր դեպքերում, բժշկական համապատասխան ցուցումների առկայության պարագայում կյանքը փրկել ոչ ղեղապատ մեկ ստեղծ տեղադրելով:

ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր սրտաբան Համլետ Հայրապետյանի ղեկավարած համաձայնագրով կողմից մշակված չափորոշիչները լրամշակվել են մասնագետների արած առաջարկությունների հիման վրա: Արդյունքում հաստատվել է, թե բժշկական որ ցուցումների եւ էլեկտրասրտագրության ինչպիսի շեղումների դեպքում է անհրաժեշտ կոնսերվատիվ բուժում իրականացնել եւ որ դեպքերում հիվանդին ամենակարճ ժամանակում տեղափոխել տեխնոլոգիաներով ու մասնագետներով անհրաժեշտ հագեցվածություն ունեցող կլինիկա: Հաստատվել են նաեւ երեւանում ու մարզերում ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների ցանկը, գործողությունների ժամանակացույցը:

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, մի քանի օր առաջ ՀՀ առողջապահության նախարարությունը փոխընթացում հուշագիր կնքեց սրտի ինվազիվ վիրահատություններ իրականացնող երեւանի 4 («Նորթ Մարաշ», «Էրեբունի», «Մալաթիա», «Հերացի» թիվ 1 համալսարանական հիվանդանոց), ինչպես նաեւ Գյումրու եւ Գորիսի բժշկական կենտրոնների հետ:

Հիշեցնենք, որ սուր ինֆարկտների դեպքում սրտի անհետաձգելի վիրահատությունների ծրագրի ընդլայնման նպատակով Հայաստանի Հանրապետության 2015թ. պետական բյուջեով հատկացվել է 500 մլն դրամ: Ծրագրում ընդգրկվում են այն քաղաքացիները, ովքեր մինչ այս ներառված չեն եղել սրտի անվճար ինվազիվ վիրահատության իրավունք ունեցող որեւէ խմբում: Հաշվի է առնվել այն հանգամանքը, որ մեր երկրում լայն տարածում ունեցող սրտամոթային հիվանդությունները մահացության ընդհանուր կառուցվածքում 48 տոկոս են կազմում եւ որ ստեղծվող մեկ ինֆարկտի դեպքում մարդու կյանքը փրկելու ամենաարդյունավետ միջոցն է:

ՀՀ առողջապահության նախարարություն

«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության հովանավորությամբ «Այունյաց երկիր»-ը պատրաստվում է թողարկել հատուկ համար՝ նվիրված Հայոց մեծ եղբուն 100-ամյակին:

Նախապատրաստման շրջանակներում Սյունիքի մարզպետարանը եւ «Այունյաց երկիր» թերթի խմբագրությունը հայտարարում են շարադրությունների մրցույթ՝ «Հայրուր տարվա ցավի գույնը» վերնագրով:

Մրցույթին կարող են մասնակցել մարզի հանրակրթական, միջին մասնագիտական եւ բարձրագույն ուսումնական հաստատությունների սովորողները:

Մրցույթի արդյունքներն ամփոփելու վերջնաժամկետը 2015թ. մարտի 15-ն է:

Լավագույն երեք շարադրություն կիրապարակվի Հայոց մեծ եղբուն 100-ամյակին նվիրված հատուկ համարում, իսկ հեղինակները կարժանանան դրամական պարգևի:

Սյունիքի մարզպետարան, «Այունյաց երկիր»

Հեպատիտ C-ի վարակ Քաջարանում. աղբյուրը, նախնական վարկածով, քաղաքի հիվանդանոցն է

Կպարզի՞, արդյոք, քննությունը մարդկանց կյանքի հետ դաժան խաղ արած անփութության մեղավորներին:

Քաջարանի բժշկական կենտրոնում այժմ միայն ամբուլատոր բաժինն է աշխատում. այս մասին հայտնեց ԲԿ գլխավոր բժշկի պաշտոնակատար Վ.Մանասյանը՝ ավելացնելով, որ ՀՀ առողջապահության նախարարությունն ու Սյունիքի մարզպետարանն օրենքով սահմանված ամեն քայլ ձեռնարկում են, իրենք սպասում են պատճառների հայտնաբերման, ու իրենք համար ամենակարեւոր հարցն է՝ որոնք

են լինելու հիվանդանոցի հետագա քայլերը:

Քաջարանի ԲԿ հիվանդանոցային հատվածի աշխատանքները դադարեցված են, այստեղ քննչական աշխատանք եւ ուսումնասիրություններ են իրականացնում համապատասխան մարմինները:

2014-ի վերջերին, միայն Ամանորից հետո լայն զանգվածներին հայտնի դարձավ ներհիվանդանոցային ինֆեկցիայի կասկածն, ու հանրապետությունում մեկ աղմուկ բարձրացվեց արտառոց այս դեպքի մասին: Առողջապահության նախարարությունը հունվարի 13-ին հայտարարեց վարչական վարույթի

թի նախապատրաստման, իսկ ՀՀ քննչական կոմիտեն հունվարի 17-ին քրեական գործ հարուցելու մասին:

Կապանի բժշկական կենտրոնի ինֆեկցիոն բաժանմունքի վարիչ Արթուր Բաղդասյանը տեղեկացրեց, որ մինչ այժմ իրենց դիմել է 6 հոգի, հինգն արդեն դուրս է գրվել, հիվանդանոցում շարունակում է բուժում ստանալ մեկ հիվանդ: Նրանք Կապանի եւ Քաջարանի բնակիչներ են, բոլորն էլ վերջին ամիսներին վիրահատվել են Քաջարանի հիվանդանոցում: Իրենք հիվանդներին խորհուրդ են տվել դիմել նաեւ Երեւան լրացուցիչ հետազոտություններ անցնելու եւ անհրաժեշտության դեպքում ՇՆՐԻՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՁ 2

Ե՛րբ է իջնելու հացի գինը եւ իջնելո՞ւ է արդյոք

Ստառողական շուկա

Հայաստանի տնտեսությունը տարեվերջին ցնցեցին դոլարի արժեւորումը եւ ազգային արժույթի՝ դրամի, կտրուկ արժեզրկումը, ինչը հանգեցրեց պարանքների, նախեւառաջ, առաջին անհրաժեշտության սննդամթերքի գների բարձրացմանը: Չուշացավ նաեւ ժողովրդական հումորը՝ դրամն սասց դոլարին. «Հարամեցիր Նոր տարին»: Աստծո ամեն օր մեր ձեռքերը դիպչում են թիվ մեկ սննդամթերքին՝ հացին: Դեռ ավելին, աղքատության շեմին հասած եւ այն հատած ընտանիքների համար հացը հիմնական ուտելիքն է, այն նվազագույնը, առանց որի անհմար է օրգանիզմի ամենապարզ գործունեությունը: Ուստի

միանգամայն բնական է բնակչության զգալուն ուշադրությունն առաջիկա համեմատաբար մատչելի այդ մթերքի վաճառքում թույլ տրվող չարաշահումների նկատմամբ: Նկատենք, որ որոշ ընտանիքներում հացը պատրաստում են տնային պայմաններում, որպեսզի որոշակի գումար տնտեսեն: Բայց պարկով այլուրն էլ է թանկացել:

Ինչեւէ, համընդհանուր թանկացումները չէին կարող շրջանցել հացն ու հացամթերքը, այն ամենը, ինչ պատրաստվում է այլուրից: Իրողությունն այն է, որ հացը, որ վաճառվում էր 240 դրամով, Ամանորից առաջ դարձավ 280 դրամ, բոքոնն ու «Ծաղիկ» հացատեսակը վաճառվում են նախկին գնից 20, բուլկին՝

10 դրամ բարձր: Լավաշն էլ թանկացել է 10-20 դրամով: Թխվածքաբլիթներն էլ վաճառվում են նախկին գնից 10-20 դրամով թանկ: Գործնականում այնտեղ, որտեղ ցանկանում էինք պարզել հացի 16 տոկոս թանկացման պատճառը, ստանում էինք հետեւյալ բացատրությունը. «Թանկացման պատճառն այլուրի գնի բարձրացումն է»: Իսկ դա, որպես կամուրջ, բերում-կապում են դոլարի հետ: Սրան հետեւում էր հավաստիացումը, թե իրենց շահույթը նույնն է, ինչ 240 դրամ գնի դեպքում: Եվ եթե դրանք փոքրիշատե կայունացել է, նոր տարվանից հետո հացի գները, նաեւ մի շարք սննդամթերքների, մնացել են նույնը: ՇՆՐԻՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՁ 8

Ծրագիր, որ մնաց թղթի վրա

Բազմաբնակարանի ողիսական

Չորս տարի առաջ Կապանում տեղի ունեցավ իրադարձություն, որ «սպառնում» էր քաղաքի համար դարակազմիկ լինել հողորդային միության փլուզումից հետո ժամանակահատվածում: Կառուցվելու էր երիտասարդ ընտանիքների համար բազմաբնակարան-բազմաֆունկցիոնալ շենքային համալիր, ինչպես նախապես հայտնեցին գործը նախաձեռնողները, «Մատչելի բնակարան երիտասարդ ընտանիքներին» բնակարանային ապահովության սոցիալական ծրագրի շրջանակում, ծրագիրը նախաձեռնել էր «ԵՊՀ շրջանավարտների միավորում» ԴԿ-ն: 2010-ի հոկտեմբերի 15-ին տեղի ունեցավ կառուցվելիք բազմաբնակարան համալիրի հիմնարկները, որին մասնակցում էին հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը, «ԵՊՀ շրջանավարտների միավորում» ԴԿ նախագահ, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի փոխնախարար Արսեն Քարամյանը: Հնչեցին բարենախնայի խոսքեր, տեղի ունեցավ համերգ մայրաքաղաքից հրավիրված երգիչ-երգչուհիների մասնակցությամբ: Ծրագիրը գրավիչ էր այնքանով, որ բացի երիտասարդների բնակարանով ապահովելու հեռանկարից՝ շինարարության ընթացքում նաև աշխատատեղեր էին ստեղծվելու, մասնավորապես հաշվի առնելով մարզկենտրոնում գործազրկության



ԼԻՏԱԿԱՆՈՒ Ն ՉՊՈՒՅՑՈՒՄԸ

բարձր տոկոսը: Շենքի շինարարությունը նախատեսվում էր ավարտել մինչև 2012-ի նոյեմբերի 30-ը, համալիրինը՝ 2013 թվականի փետրվարը: Բայց ինչպես ամենադժվար դատավոր ժամանակը ցույց տվեց, գրավիչ ծրագիրը դատապարտված էր մնալու թղթի վրա:

«Այունյաց երկիրը», որպես Կապանում իրականացվող նախադեպը չունեցող նախաձեռնություն, ի

սկզբանե իր տեսադաշտում էր պահում շինարարության ընթացքը: Հիմնարկների արարողությունից մոտ մեկ տարի հետո («Այունյաց երկիր», 15 սեպտեմբերի 2011թ.) թերթն արձանագրել էր, որ անցած ժամանակամիջոցում քարը քարին չի դրվել, քանզի կառույցի հիմքերը փորելուց հետո գործը դադարել էր: Նաև կա՞նի հայտնել, որ ըստ կապանցիների՝ համալիրի կառուցման համար

տեղանքը ճիշտ չէր ընտրված: Թերթը 2013-ի ապրիլին հարցում էր արել (այն ժամանակ, երբ երիտասարդ ընտանիքներն արդեն բնակարանամուտ պիտի տոնած լինեին), եւ «ԵՊՀ շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպությունը հանդես էր եկել պարզաբանմամբ, որ մեջքերում ենք նույնությամբ. «Բազմաբնակարան շենքի հիմքերի փորման և փոստրակի մշակման աշխատանքները կատարելու ընթացքում բացահայտվել են մակերեսային գրունտային ջրեր և այլ երկրաբանական խնդիրներ, որոնց կարգավորման համար անհրաժեշտություն է առաջացել կատարելու լրացուցիչ ֆինանսական ծախսեր, ինչից կապալառու «Մողղըն բիլդինգ» շինարարական կազմակերպությունը հրաժարվել է: Այդ պատճառով շենքի շինարարական աշխատանքները որոշակի ժամկետով կասեցվել են և ներկայումս մեր կազմակերպության կողմից միջոցներ են ձեռնարկվում նշված լրացուցիչ ծախսերը հոգալու և ծրագրում նոր շինարարական կազմակերպություն ընդգրկելու համար: Իրականացված միջոցառումների վերջնական արդյունքների վերաբերյալ կտրամադրվի լրացուցիչ տեղեկատվություն»:

Եվ մի տարի առաջ Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը մեր թերթին տված հարցազրույցի ժամանակ խնդրո առարկային առնչվող հարցին պատասխանելով հայտնել էր, որ շինարարությունը ստորգետնյա ջրերի պատճառով դադարեցվել է, և անհրաժեշտ է 105 մլն դրամ, բայց հարցը լուծում չի ստացել: Բացի այդ, քաղաքապետարանն առաջարկել է մեկ այլ տարածք

տրամադրել Լեռնագործների փողոցում կամ Չորք թաղամասում, որտեղ խորհրդային տարիներին բնակելի շենքի համար հիմքեր էին գցվել: Բայց հարց է մնում նաև «Քաղաքերը» ռեստորանի տարածքը նախկին տեսքին բերելը, որը հատկացվել էր վերոհիշյալ շենքը կառուցելու համար: Դժվար է ու ծախսատար:

Սա է խնդրի պատմությունը: Երբ պիտի սկսվեր շենքի շինարարությունը, կառույցի շուրջըլորը թաղամասապատվել էր, այժմ թաղամասերն էլ չկան, և երբեմնի շինարարական անցորդներին է ներկայացնում ողջ «շքեղությամբ», և երբեմնի արհեստական լճի տարածքը, որ տարիներ առաջ ժամանցի գոտի էր, այժմ ավիառաքարային կառուցված պատկեր է ներկայացնում և հարուցում կապանցիների գարմանքը, այս ամենն ինքնապիտի շարունակվի...

Վերջերս էլ լուրեր են շրջանառվում, թե իբր երիտասարդական բազմաբնակարան շենքի կառուցման համար հատկացվելու է երկաթուղային կայարանի մերձակա տարածքը: Դրանց իսկությունը պարզելու համար դիմեցինք ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի փոխնախարար Արսեն Քարամյանին և Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանին:

Ա.Քարամյանը «Այունյաց երկիր» հարցադրմանը պատասխանեց, որ բնակչության շինարարության համար հողահատկացման խնդիրը քննարկման փուլում է: Կապանի քաղաքապետ Ա.Հայրապետյանը խմբագրությանը փոխանցեց համարյա այն, ինչ Ա.Քարամյանը. բնակչության մի տարածքի հարցը դեռ պիտի քննարկվի կառավարությունում:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Հեպատիտ C-ի վարակ քաջարանում. աղբյուրը, նախնական վարկածով, քաղաքի հիվանդանոցն է

ՍԿԻՉԲԸ ԵՋ 1

բուժումը շարունակելու համար: Բժշկուհին տեղեկացրեց նաև, որ հնարավոր է մարդը հիվանդ լինի հեպատիտ C-ով, բայց աստանշաններ առկա չլինեն, չինանա իր հիվանդության մասին...

ՀՀ առողջապահության նախարարությունը հունվարի 13-ին տարածած հայտարարության մեջ հայտնել էր, որ նախարարի հրամանի համաձայն նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի» մասնագետները «Քաջարանի ԲԿ» ՓԲԸ-ում իրականացրել են ներհիվանդանոցային վարակների կանխարգելմանն ուղղված միջոցառումների գնահատման ուսումնասիրություն, որն ուղեկցվել է լաբորատոր հետազոտություններով. «Վերջինիս արդյունքում վիրաբուժական բաժանմունքից բժշկական գործիքների մանրէազերծման որակի վերաբերյալ վերցված 60 նմուշից 13-ում (21.6%), ախտահանման որակի 60 նմուշից 5-ում (8.3%), մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքից բժշկական գործիքների մանրէազերծման որակի վերաբերյալ վերցված 40 նմուշից 8-ում (20%) հայտնաբերվել են շենքում»:

Նախարարությունը միաժամանակ հայտնել էր, որ «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ է հուսպատկալացվել 4 հիվանդ, որոնց մոտ պատկանում է սուր հեպատիտ C: Կապանի ԲԿ-ում իրականացվել են աստիճանաբար և «Նորք» ինֆեկցիոն հիվանդանոցում՝ հաստատող լաբորատոր հետազոտություններ: Իրա-

կանացվել է դեպքերի համաճարակաբանական հետազոտություն, և պարզվել է, որ բոլոր հիվանդները վիրահատական բժշկական միջամտություն են ստացել «Քաջարանի ԲԿ»-ի վիրաբուժական բաժանմունքում՝ գրեթե նույն ժամանակահատվածում: Նույն ընթացքում Քաջարանի հիվանդանոցում վիրահատված ևս մեկ հիվանդ հոսպիտալացվել է «Նորք» ինֆեկցիոն հիվանդանոց, իսկ այժմ բուժումը շարունակում է Կապանի հիվանդանոցում:

Հետազոտությունների արդյունքների մասին նախարարությունը տեղեկացրել է Սյունիքի մարզպետարանին: Այս առողջապահական պետական տեսչությունը նյութեր է նախապատրաստել վարչական վարույթ հարուցելու համար, մարզպետարանն առողջապահության նախարարության մասնագետների մասնակցությամբ ստեղծել է հանձնաժողով: Քննարկվել են ուսումնասիրության արդյունքները և կազմակերպվել Քաջարանի հիվանդանոցում ներկայումս և նախկինում վիրահատական բժշկական միջամտություն ստացած հիվանդների և բուժանձնակազմի՝ հեպատիտ C-ի նկատմամբ լաբորատոր հետազոտություններ: Վերցվել է արյան 40 նմուշ (22-ը՝ բուժանձնակազմից, 18-ը՝ հիվանդներից): Նմուշները հետազոտվել են ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնում»: Լաբորատոր հետազոտության արդյունքում հիվանդներից վերցված 3 նմուշում եւս հայտնաբերվել են հեպատիտ C-ի եմ (M) և Ջի (G) հակամարմիններ: Այսպիսով

պարզ է դառնում, որ բոլոր հիվանդները վիրահատական միջամտությունը ստացել են նույն ժամանակահատվածում, ինչը չի բացառում հեպատիտ C-ի ներհիվանդանոցային վարակման հավանականությունը: Հունվարի 16-ին արդեն ՀՀ առողջապահության նախարարությունը տեղեկացրեց նաև, որ դեպքի առիթով նախարարի հրամանով ստեղծվել է մասնագիտական հանձնաժողով: Դրանում ընդգրկված են ինչպես կլինիցիստներ, այնպես էլ Առողջապահական պետական տեսչության և «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի» մասնագետներ: Հանձնաժողովին հանձնարարվել է կարճ ժամանակում ուսումնասիրել «Քաջարանի ԲԿ» ՓԲԸ-ի հիվանդանոցային ծառայության կազմակերպման համապատասխանությունը ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով հաստատված չափորոշիչներին, ներհիվանդանոցային ինֆեկցիաների կանխարգելմանն ուղղված միջոցառումների համապատասխանությունը գործող իրավական ակտերին, ինչպես նաև հիվանդանոցում գործող որակի վերահսկման մասնագիտական հանձնաժողովի գործունեության համապատասխանությունը ՀՀ ԱՆ 16.01.2014թ. թիվ 37-Ս հրամանի պահանջներին: Հանձնաժողովը կկատարի Քաջարանի հիվանդանոցում արձանագրված հեպատիտ C-ով վարակի դեպքերի համաճարակային իրավիճակի ուսումնասիրություն:

Ի դեպ, Քաջարանում խոսակցություններ են շրջանառվում, որ հի-

վանդությամբ վարակվածների թիվն իրականում ավելի շատ է ևս անցում է տասնյակից: ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի» գլխավոր տնօրենի տեղակալ Լիլիթ Ավետիսյանը մեզ տեղեկացրեց, որ այս առումով դեպք համարվում է լաբորատոր հետազոտությամբ հաստատված, իսկ դրանք ութն են: Հնարավոր վարակակիրներին և հիվանդներին շուտ հայտնաբերելու համար իրենք աշխատանքներ են տանում գտնելու և հետազոտելու բոլոր այն մարդկանց, որ օգտվել են հիվանդանոցից:

ՀՀ ԱՆ գլխավոր ինֆեկցիոնիստ, «Նորք» ինֆեկցիոն հիվանդանոցի տնօրեն Արա Ասոյանը NEWS.am-ին հայտնել էր, որ Քաջարանում հեպատիտ C-ով վարակված հիվանդները պետապատվելի շրջանակում են բուժվելու:

Բայց խոսքը վերաբերում է հիվանդության միայն սուր շրջանին. հեպատիտ C-ն այնուհետև կարող է քրոնիկական բնույթ կրել և տարիների երկարատև բուժում ու հետազոտություններ պահանջել, ինչն արդեն պետապատվելի շրջանակում չէ: Հիվանդներն իրենք պետք է հոգան չափազանց թանկարժեք բուժման ծախսերը:

Ի՞նչ է լինելու կոնկրետ այս պայմաններում վարակված հիվանդների հետ, եթե նրանք հետագա բուժման կարիք ունենան. չէ՞ որ մարդիկ վարակվել են կոնկրետ տեղավորների առկայության դեպքում, և նրանք բուժման ծախսերի հարցը եւս պետք է մտահոգ գործը քննողներին...

Ի դեպ, հունվարի 17-ին նաև

քրեական գործ է հարուցվել ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչությունում «Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունում սանիտար-հակահամաճարակային կանոնները խախտելու, անվտանգության կանոններին չհամապատասխանող՝ 2 և ավելի անձանց առողջությանը վնաս պատճառած ծառայություններ մատուցելու դեպքի առթիվ: Վարչությունում ոստիկանության Կապանի բաժնից ստացվել են նյութեր, որոնց համաձայն Քաջարանի ԲԿ բուժօգնության դիմած մի քանի քաղաքացի բացատրություն է տվել, որ նախքան բժշկական կենտրոն դիմելը հեպատիտ C հիվանդության վարակակիր չի եղել, սակայն նշված կենտրոնում բժշկական միջամտության, վիրահատության ենթարկվելուց հետո իր մոտ հեպատիտ C է ախտորոշվել:

Նկատի ունենալով, որ նախապատրաստված նյութերում առկա են ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցագործության հատկանիշներ՝ Սյունիքի մարզային քննչական վարչությունում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 277-րդ հոդվածի 1-ին մասով և 279-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Կատարվում է նախաքննություն:

Վերջում տեղեկացնենք, որ հեպատիտ C-ն վարակիչ հիվանդություն է, որը գլխավորապես ախտահարում է լյարդը: Համախ հեպատիտ C-ն ընթանում է առանց ախտանիշների, սակայն քրոնիկական ընթացքը կարող է սպիակաճ փոփոխություններ առաջացնել լյարդում և տարիների անց՝ լյարդի ցիռոզի պատճառ դառնալ: Հեպատիտ C-ն հիմնականում փոխանցվում է արյան միջոցով՝ թմրանյութերի ներերակային օգտագործման, վատ ախտահանված բժշկական գործիքների օգտագործման և արյան փոխներարկման ճանապարհով:

ԱՐՄԵՆ ԵՎ ԿԱՎԱԳՅԱՆ

ՆԻԿՈԼԱՅ ՊԱՊ. «Լավ պատերազմ չի լինում, իսկ խաղաղությունն ամենաթանկ բանն է աշխարհում»



ՄԱՍԻՍԱՆՆԵՐ Ա. ՄԱՐԿՈՍՅԱՆ

100-ամյակը շնորհավոր

Որեւէ մեկին օրինանք տալիս հաճախ ենք լսել՝ հարյուր տարեկան դառնաւ եւ յոթ զավակով սեղան նստես: Դա այսօր իրականություն է Նիկոլայ պապի համար: Մեր երկրի փարբեր մարզերում եւ Ռուսաստանի Դաշնությունում ապրող բազում զավակները, թոռները, ծոռները՝ թվով քառասուններէք հոգի, հավաքվել են հարազատ օճորքի փակ՝ շնորհավորելու սիրելի հոր, պապի Ամանորը, Սուրբ ծնունդը, իսկ հունվարի 10-ին նշելու նաեւ նրա հարյուրամյակը: Վերջինից Նիկոլայ Անիկելի Բաղայանը հունվարի 10-ին դարձավ հարյուր տարեկան: Նա ընտանիքի առաջին զավակն էր: Այս մեծ մարդը փրկությանը է հիշում Սոնա մորը, ով ծնունդով Քարահունջ գյուղից էր, եւ ում բարի անունով են հիշում նաեւ բոլոր վերջիններս: Ասում են՝ Սոնա մայրիկի ձեռքով պատրաստված ուտելիքի համը դեռ իրենց քիմքերը խուրտուր է փախիս. որքան լավ խոհարար, մաքրածեռ կին է եղել:

Նիկոլայ պապն ամուսնացել է երկու անգամ. առաջին անգամ 1944-ին, որից ծնվել է Ռուբիկ զավակը, եւ 1946-ին: Երկրորդ ամուսնությունից ծնվել են Ռշտունի, Ծովիկ, Ռաֆիկ, Ռոզիկ եւ Ռամելա զավակները: Ռշտունին եւ Ռաֆիկն իրենց ընտանիքներով բնակվում են Ռուսաստանի Դաշնությունում: 1938թ. գորակոչվել է Կարմիր բանակ, մասնակցել ֆիննական պատերազմին: Ծառայությունն ավարտին էր մոտենում, երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը: Կռվել է տարբեր ճակատներում: Վիրավորվել է երեք անգամ, վերջին անգամ՝ 1942թ., Շեպետովկա քաղաքի մոտակայքում, եւ հուսպիտանում առողջությունը մասնակիորեն վերականգնելուց հետո զորացրվել որպես երկրորդ կարգի հաշմանդամ: Պարգևատրվել է բազմաթիվ շքանշաններով ու մեդալներով:

Իր ապրած կյանքի ամենանշանակալից պահը (ամենանշանակալից եւ ոչ թե ամենալավ՝ Ռ.Յ.) համարում է Կարեն Սերոբի Դեմիրճյանի հետ հանդիպումը: Բայց այդ մասին՝ հետո: Կարիքը, գործազրկությունը շատերի նման նրա զավակներից երկուսին ստիպել են «ժամանակավորապես» իրենց մոտ են տեղափոխել նաեւ ընտանիքի մնացած անդամներին: Այսօրվա դրությամբ Նիկոլայ պապի բազմանդամ գերդաստանի մի զգալի մասը մշտական բնակություն է հաստատել Ռուսաստանի Դաշնությունում՝ աշխարհում սփռված հայ ընտանիքների թիվն ավելացնելով եւս մի քանիսով: Ու ինչքան էլ հաճելի չլինի, միեւնոյն է, փաստը մնում է փաստ, որ այս մարդիկ հայրենի հողի հարազատ օջախում այլեւս հանդիպելու են լավագույն դեպքում տոնական օրերին կամ ուրախություններին, իսկ վատթարագույն դեպքում (աստված մի արասցե)՝ տխրության առիթով: Ու թվում է՝ եթե մեր երկրում երկու մարդ կա, որ պետք է դժգոհ լինի մեր կառավարությունից, իշխանություններից՝ ապա նրանցից մեկը Նիկոլայ պապը պիտի լինի: Բայց, չէ՛, այդպես չէ...

«Պատերազմը չարիք է: Մասնակցել եմ երկու պատերազմի: Լավ պատերազմ չի լինում, իսկ խաղաղությունն ամենաթանկ բանն է աշխարհում: Իմ հանրապետության նախագահն ամենալավն է, եթե կարողանում է խաղաղություն պահել: Սա կարող են հասկանալ միայն նրանք, ովքեր տեսել են, թե ինչպես են կանայք գերանդրով խոտ հնձում կամ տրակտորի դեկին նստած՝ հերկ անում: Կամ էլ տեսնում են, որ ինչ-որ տարածքներ չեն հնձվել: Հարցնում են՝ ինչո՞ւ չեն հնձվել: Ասենք՝ հարցնելու էլ հարկ չի եղել՝ պարզից էլ պարզ է՝ տեղը ճակատում է: Օգնության ենք հասել մենք», - վերհիշում է 100-ամյա պապը: Պապի ասածը հաստատում են համագյուղացիները: Առաջին փրո մասին չի ցանկանում խոսել, բայց կնոջը կորցնելու ցավը դեռ նրա հոգում է. «Երեսուն

տարի երեխեղով շրջապատված եմ, բայց մենակ եմ»:

Նիկոլայ պապը խոսելիս հաճախ է գրույցի թեման իր նախածեռնությամբ փոխում-անցնում այլ թեմայի, բայց ոչ մի դեպքում իր միտքը կիսատ չի թողնում: Ասում է՝ մեր կյանքի ամենակարեւոր բնագավառը դպրոցն է, որովհետեւ դպրոցի այսօրվա սովորողը վաղը դառնալու է մեր երկրի ղեկավարը: Բոլորն ասում են, թե իրենք դպրոցում լավ են սովորում: Բայց ինչ-որ հավատա չի գալիս: Ախր մի քանիսն էլ մեր տնից են դպրոց գնում. էլ ինչպե՞ս են լավ սովորում, երբ ոչ մեկի ձեռքին գիրք չեն տեսնում:

«Հարյուր տարեկան եմ եւ ունեմ վեց զավակ եւ շատ թոռներ, ծոռներ, որ մի փոքր գյուղի բնակչություն կարող է կազմել: Ազատագրված տարածքներում, Սյունիքի տարածաշրջանում տասնյակ գյուղեր կան, որոնց բնակչությունն ավելի քիչ է: Այդ գյուղերում մեր աղքատ պետությունը համայնքապետեր է պահում, դպրոցի տնօրեններ, բազում այլ նյութական միջոցներ պահանջող հաստիքներ: Իմ պետությունը լավ աշխատողին խրախուսելու համար կոչումներ, մեդալ-շքանշաններ է տալիս, վաստակավոր ուսուցիչ, դերասան, տարբեր կոչումներ շնորհում: Իսկ երբ գալիս է նրանց թոշակի անցնելու ժամանակը, նշված տիտղոսները, կոչումներն անպայման հաշվի են առնվում՝ ինչպես, ասենք, աշխատանքային ստաժը կամ սոցվճարների չափը: Ինծանից ջահելները կան, ովքեր ավելի շատ թոռ, ծոռ, ծոռյանց ունեն, բայց ինձանից էլ պակաս թոշակ են ստանում, ընդամենը՝ քառասուն հազար դրամ: Արդար չէ: Մեր կառավարությունը պետք է մտածի այս մասին: Թոշակ նշանակելիս հաշվի են առնում, թե մարդը քանի տարվա աշխատանքային ստաժ ունի եւ ինչքան սոցիալական վճարում է կատարել: Պետք է դրանց ավելացնել նաեւ այն, թե ինչ է արել նա ազգիս մեծացման համար (զենոֆոնդի հարստացման համար Ռ.Յ.)», - իր մտահոգությունն է արտահայտում Նիկոլայ պապը: Ասում են՝ գերանդրով

ամենալավ հունձը կատարում են վերջինեցիները, ամենալավ բոքոն հացը թխում են Տեղ գյուղում, իսկ լավաշը՝ Խամաճախում: Սրան ի պատասխան Նիկոլայ պապն ավելացնում է. «Ամենալավ հացն էլ տալիս են դարձյալ մեր գյուղում»:

Լսողները պատմում են, որ նույնիսկ արդեն ոտքերից հաշմանդամ Նիկոլայ պապը գերանդրով խոտ-հունձ է կատարել վերջինից հայտնի սարերի ամենաթեք ծերպերին, որը տեսանելի է Գորիս քաղաքի ցանկացած կետից:

Իսկ Կարեն Դեմիրճյանի հետ իր հանդիպման մասին ողջ վերջինը գիտի: Ինքը պատմում է հետեւյալը. «Տասը հոգանոց ընտանիքում շատ տարիներ միակ աշխատողը ես եմ եղել: Ոչ մի աշխատանքից չեմ խուսափել: Տղամարդը պետք է հնար գտնի իր ընտանիքը պահելու համար: Զավակներիցս չորսը բարձրագույն կրթություն էր ստացել խորհրդային պետության միջոցներով, բայց աշխատանք չունեին եւ ո՛չ պետությանն էին մի բռն կոպեկի օգնություն տալիս, ո՛չ էլ իրենց ընտանիքին: Նամակ եմ գրում Կենտրոնի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանին: Երկու շաբաթ հետո շրջկոմից գանգահարում են ու ասում, որ Կարեն Սերոբիչը եկել ու ուզում է ինձ հետ հանդիպել (մեր ծորերում «Նամակ ռուսաց թագավորին» վիպակի լավ վերջաբանին դեռ հավատում են Ռ.Յ.): Մտտ մեկ ժամվա գրույցի ընթացքում ներկայացնում եմ իմ պահանջը: Ասում եմ՝ «Նախիրտ»-ում 27 հազար բանվոր է աշխատում, այդքան էլ մեր շրջանի բնակչությունն է, աստված չանի, որ հանկարծ նորից պատերազմ սկսվի, թշնամին առաջինը «Նախիրտ»-ին կլսվի», թե՛ վերջինին: Ասում է՝ բնականաբար «Նախիրտ»-ին: Ասում եմ՝ դե դու էլ այնպես արա, որ մեկի փոխարեն լինի 50-100 «Նախիրտ», այսինքն՝ հասկացնում եմ, որ հանրապետության գյուղերում նույնպես պետք է բացվեն արդյունաբերական ձեռնարկությունների մասնաձյուղեր. դրանով էլ գյուղերը չեն դատարկվի, եւ երիտասարդներն աշխատանք կունենան: Մտտ երկու ամիս հետո վերջինս բացվեց Գորիսի տրիկոտաժի արտադրական միավորման մասնաձյուղը: Նման մասնաձյուղեր բացվեցին նաեւ շրջանի, հանրապետության տասնյակ գյուղերում»:

Նիկոլայ պապը կարծում է, որ դա Կարեն Դեմիրճյանի հետ իր հանդիպման արդյունքն էր: Գուցե եւ այդպես է:

Նիկոլայ պապն այսօր էլ հրաշալի առողջություն ունի: Հեթոպալի խոսք չէ, որ ասում ենք: Ավելի քան չորս ժամ տեսած գրույցից հետո էլ (ամբողջ գրույցի ընթացքում պապը շրջապատված էր ավելի քան 20-25՝ 4-ից մինչեւ 20-25 տարեկան թոռներ-ծոռների աղմուկ-աղաղակով) նա հոգնածությամբ ոչ մի նշան ցույց չէր տալիս: Տարիքի մասին, թերեւս, նրա ծանրացած լսողությունն է խոսում եւ մեկ էլ պատերազմից մնացած սպիները: Համոզված ենք, որ նրա 110-ամյակի մասին եւս «Այունյաց երկիր»-ը խոսք է ասելու: Ի դեպ, Նոր տարվա տոնական սեղանի շուրջ թոռներից մեկը նրան այնքան առողջություն է ցանկացել, որ միասին նշեն պապի 110-ամյակը՝ դրանով վիրավորելով վերջինին: Իսկ նա վիրավորվել էր, քանի որ կարծում էր, որ թոռը կարող էր ավելի մաղթել, մասնավորապես որ մարդու կյանքն Աստծո ձեռքում է:

Դե, ուրեմն, շնորհավոր մեկդարյա հոբելյանդ, սիրելի՛ պապ, քեզ առողջություն, Աստծո կամոք՝ 110 եւ ավելի տարիների կյանք:

ՌԵԴԻԿ ԶՅՐԱՊԵՏՅԱՆ
8 հունվարի 2015թ.

Գրական Սյունիք



ՆԵՐՍԵՍ ՎՈՒԲԵԿՅԱՆ Մեղրի

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԿԵՍՊԻՇԵՐԻՆ

Գիշեր է: Արդեն խոր քուն են մտել Իմ բալիկները անկողնում փաթուկ... Բունս չի փսնում: Մտքեր են եկել, Եկել ու հոգուս դռնակն են թակում...

Ասում եմ՝ մտքեր: Իմ մտքերն ու ես Ջրույց ենք անում գիշերվա կեսին... Աստիճակն են շողում վերեւում պես-պես... Նայում եմ լուսնի հրաշք երեսին...

Այնքան շատ բեռ ենք մենք այսօր ունել, Որ բթնում ենք այդ բեռնակները... Ինչ լավ է, որ կան ջահերը լուսե, Ու մեր հոգին են անոթում հոյսով...

Ուրեկոց ատաջ մրտան էլ պեպր՝ Մովսես է լինում եւ հոգին հաճախ: Նա չունի լեզու, չունի ոտք ու ձեռք, Բայց կյանքի լույսն է՝ աստվածային ջահ:

Ներք է լինենք այսբան կյոթասպաշտ, Ի վերջո, Աստված կա մեր վերեւում... Թողած բնություն, ծաղկուն ալրք ու դաշտ, Փող ենք որոնում այսօր ամենուր:

Մի քիչ ջերմություն փսնեք իրար, մարդիկ, Միմյանք ընծայեք հոգու զանձեղից... Ներք է լինենք չոր ու փմարդի, Մարդ ենք վերջապես՝ սրեղծված Արարից:

Ուրեկոց ատաջ մրտան էլ պեպր, Մրտան՛ լսա՛ն ուրեկոց հեպր... Որ չի կշարանա որկորդ կրքեք, Երբ հոգի չունի լցված փողոք քո:



ԳԱՅԱՆԵ ՎՈՐԴԻԿՅԱՆ ԿԱՐՈՏ

Ծառե՛ր՝ հյուսված ու փկլոր, Նոգնած զարնան կարտրից, Ծառե՛ր՝ թեթված, գլխիկոր... Որքան՛ նանկ եք դուք ինձ:

Ես էլ ճոճվում եմ ձեզ պես, Տարտերվում ու լախս, Վերադարձի՛ր, իմ տիսակ, Եվ բո՛յն հյուսիր ճյուղերիս:

Որ քո երգից բողբոջեն Իմ ճյուղերը պաղիկ, Ու սիրով ինձ պարտուն Մեղեղիներդ քաղցրիկ...

Արցախյան դաժնություն. էջեր սարեգրությունից



Հունվարի 28-ը Բանակի օրն է

Կրակագծում

**Փետրվարի 18-ին, 19-ին
ադրբեջանցիները հրե-
տակոծել են Խնձորեսկ
գյուղը: Մոտ 15 արկ է
երկու օրվա ընթացքում
ընկել գյուղի վրա: Կա
մարդկային զոհ:**

Խնձորեսկի մարտիկներն արժանապատվորեն են դիմակայել թշնամու սանձարծակությանը:

Սանասար Բեգլարյանի դասակը հաջողությամբ գրոհել է Կուբաթլիի շրջանի սահմանապահ ուղեկալի վրա՝ փախուստի մատնել օժոնակներին, վնասագրծել ադրբեջանցիների կրակակետը, բռնագրավել հրոսակների ռազմական տեխնիկան:

Գորիսի տարածքում տեղաբաշխված սահմանապահ ուղեկալներին, հատուկ զննչի Գորիսի վաշտի ստորաբաժանումներին տրված է մարտական պատրաստության հրաման:

Սիսիանի, Եղեգնաձորի միլիցիայի բաժինների անձնակազմերը պատրաստ են առաջին անհրաժեշտության դեպքում օգնության հասնել գորիսցիներին:

Խնձորեսկցիները դեռ չէին հասցրել մոռանալ փետրվարի 11-ի զնդակոծությունը. երբ գյուղը կրկին՝ փետրվարի 18-ին, դարձավ հրետակոծության թիրախ: Երեկոյան՝ ժամը 21-ի սահմաններում, Կուբաթլիի շրջանի Նովու, Ալիդուլիշեն գյուղերի մերձակայքից եւ սահմանամերձ պահակակետից հրանոթներով, մարտական մեքենաներով կրակ բացվեց Խնձորեսկի ուղղությամբ: Արկերի առաջին պայթյունին հաջորդեցին մոր կրակոցներ: Վեցը պայթեց գյուղում: Երջանիկ պատահականությամբ առաջին այդ պայթյուններն էական վնասներ չպատճառեցին

գյուղին: ՀՀ ներքին գործերի նախարարության հատուկ զննչի Գորիսի ստորաբաժանումն Խնձորեսկի դասակի մարտիկները՝ հրամանատարությամբ Սանասար Բեգլարյանի, որոնք ոտքի էին առաջին կրակոցներից անմիջապես հետո, փոխադարձ կրակահերթեր ուղղեցին հակառակորդի կրակակետին: Սակայն ծավալուն հակագրոհը սկսվեց միայն փետրվարի 19-ի առավոտյան՝ մոտ ժամը 7-ին...

Խնձորեսկի մարտիկներին նախորդ օրվանից օժանդակության էր եկել հատուկ զննչի ստորաբաժանումն Գորիս քաղաքում տեղաբաշխված ջոկատը:

Ամբողջ գիշեր կրակագծում էր նաեւ ներքին գործերի բաժնի օպերատիվ խումբը:

...Լուսաղեմին ձեռնարկված լայնածավալ հակագրոհին հաջորդեց ժամանակավոր հրադադար: Լռել էին հակառակորդի կրակակետերը եւս:

Ցավալիորեն մարտական գործողությունների այդ օրվա խորհրկան չամփոփվեց դրանով: Ցերեկը՝ ժամը 13.30-ի սահմաններում, Խնձորեսկը եւ գյուղի մերձակայքը ենթարկվեցին ինտենսիվ հրետակոծման: Ինը արկ, նախնական տվյալներով, ընկավ գյուղի վրա՝ տարբեր տեղերում: Արկերից մեկը պայթեց Անդրանիկ Դադայանի տան վրա, որի հետեւանքով մահացու վիրավորվեց չորսամյա Լուսինե Բալասանյանը:

Վիրավորվեցին տան հարը՝ Ալվարդ Դադայանը, եւ տանտերը՝ Անդրանիկ Դադայանը: Արկի հարվածն այնչափ դիպուկ էր, որ անմիջապես հրդեհ բռնկվեց տանը, փլուզվեց պատը: Մեր աչքի առաջ հրկիզվող, կիսափլված տան իրերը, հագուստկապուստը փորձում էին փրկել համագյուղացիները, տեղ հասած հրշեջները՝ ծառայության ղեկավար Սուրեն Հակոբջանյանի գլխավորու-

թյամբ, թեեւ դժվար չէր համոզվել ռուպե առ ռուպե մոխրացող տնից ինչ-որ բան փրկելու անհնարինությունը:

Սաշիկ Փանդուցի, Արմեն Մուրադյանի, Մխիթար Իլուլուցի, Սեյրոժա Ճատունցի, Վազգանուշ Բաղդադյանի տնամերձերում կան տան բակերում պայթած արկերը նույնպես նյութական վնասներ պատճառեցին: Վիրավորվել էր տասներեքամյա Գայանե Սինունցը:

Ադրբեջանցիների ցերեկային վերահարձակումը, որի ողբերգական հետեւանքները չէին կարող չկանխատեսել դրա ձեռնարկից, արժանի էր համարժեք պատասխանի:

... Վճիռը կայացված էր, գործով վնասագրծել, շարքից դուրս բերել Կուբաթլիի սահմանային պահակակետը: Ի դեպ, այս կետը, որտեղ ավելի վաղ տեղաբաշխված էր 4-րդ բանակի ուղեկալը, քիչ անգամ չէր հենադաշտ հանդիսացել թշնամական, արյունալի ձեռնարկումների համար:

Գրոհին նախորդեց ադրբեջանական կրակակետի հրետակոծումը: Հրետանավորներին անձամբ գլխավորում էր շրջանի զինվորական պարետ, մայոր Ս.Գրիգորյանը: Կեսժամյա հրետանային պատրաստությունից հետո՝ ժամը 15-ին, Սանասար Բեգլարյանի դասակն անցավ գրոհի: Մեկ ժամ տեւած մարտը թուրք օժոնակներին ստիպեց փախուստի դիմել:

Կրակակետը շարքից հանված էր դասակի հմուտ, համարձակ գործողությունների շնորհիվ: Այնտեղ գտնվող ռազմական տեխնիկան հիմնականում ոչնչացվեց, երկու հակատանկային հրանոթ, 50 արկը արկ, մարտական երկու մեքենա բռնագրավվեցին:

Կարող եմ հաստատել, որ 7-րդ բանակի օպերատիվ խմբի ուղեկալի զինվորականները հայ մարտիկների հետ գործում էին խիստ համա-

գործակցված եւ իրենց հնարավորությունները լիովին ծառայեցրին ադրբեջանցի հակահարված տալուն:

Ժամը 18-ի սահմաններում, ինչպես նկատեցին ուղեկալի դիտորդները, ադրբեջանցի բանակայինները կրկին մոտենում էին ավերված ուղեկալին:

Քիչ անց հրետանային փոխհրամանատարները վերսկսվեց...

Անընդհատ, տագնապալի երկու օր իր դրոշմն էր թողել Ներքին Խնձորեսկի վրա: Անմիջապես սահմանագծում գտնվող գյուղը, որ յուրօրինակ մի ամբողջ է այսօր գորիսցիների համար, արիաբար դիմակայում էր պարտադրված սադրանքին: Գյուղի վիճակը հեռու էր խուճապային լինելուց, թեեւ անկարելի էր նաեւ այն սովորական համարել: Ներքին Խնձորեսկցիների մարտական ոգին բարձր են պահում Սեմիկ Դուլյանի ջոկատի տղաները:

Խնձորեսկ մտնելուց տեսանք, թե ինչպես ավտոբուսներով, մարդատար տարբեր մեքենաներով երեխաները տեղափոխվում են գյուղից: Առաջին հայացքից էվոկուացիայի ծանր տպավորություն թողնող երեւույթին լույս սփռեց ԲՈՒՄՏՁ-ի տնօրեն Ռաֆիկ Բաղդասարյանը:

- Ավտոբուսները մենք ենք հատկացրել՝ իշխանությունների հանձնարարությամբ, - ասաց նա: **- Թեեւ ոչ ոք, անգամ փոքրերը, ծերերը չեն ցանկանում այս պահին լքել հայրենի տունը, գյուղը, այնուամենայնիվ դա անհրաժեշտ է համուն մանկահասակների, ծերերի անվտանգության:**

Այնուհանդերձ, քչերը համաձայնեցին թեկուզե մի քանի ժամով օթեւանել գյուղից դուրս:

Ուշ երեկոյան հանդիպեցինք ՆԳ բաժնի պետի տեղակալ Սեւակ Առաքելյանին: Նա իրազեկեց, որ Գորիսի տարածքում տեղաբաշխված սահմանամերձ ուղեկալներին, հատուկ զննչի Գորիսի վաշտի ստորաբաժանումներին տրված է մարտական պատրաստվածության հրաման, որ Սիսիանի, Եղեգնաձորի միլիցիայի բաժինների անձնակազմերը պատրաստ են առաջին անհրաժեշտության դեպքում օգնության հասնել գորիսցիներին:

Իսկ թե ինչպիսին է վիրավորնե-

րի առողջական վիճակը, իմացանք շրջանային հիվանդանոցի վիրաբուժական բաժնում՝ վիրաբույժ Վիտալի Խուրշուդյանից, ով Հմայակ Գրիգորյանի եւ Վլադիկ Հայրապետյանի հետ իրականացրել էր բուժօգնությունը: Ահա թե ինչ ասաց նա. «**Լուսինեի կյանքն անհնարին է փրկել: Լուրջ վիրավորված է նրա մայրը՝ Ալվարդը: Վնասվել է թոքի բլիթը եւ հարողնաշարային շրջանի մկանը, մեծ բանակությամբ արյուն է կորցրել: Ամեն ինչ արվում է նրա կյանքը փրկելու համար:**

Գայանե Սինունցը, որի ծնկահողող վիրավորվել է, վերականգնվել են կապանները: Նրա վիճակը կլավանա, անշուշտ»:

Ահա ինչ է տեղի ունեցել Խնձորեսկում փետրվարի 18-ին, 19-ին: Իսկ թե ինչու հենց այս օրերին, կանխատեսումներ անելու հարկ չկա: Սակայն, համուն մեր ինքնապաշտպանության ապագայի, աճողուտ չէր լինի վերիիշել օրինաչափության աստիճանի հասած մեկ-երկու ճշմարտություն: Լեռնային Ղարաբաղի իրավիճակի սրումը բոլոր դեպքերում եւ անպայմանորեն տեղայնացվում է մեր սահմանագծում, ինչը, կարծեք, մեր ուշադրությունը շեղելու նպատակ է հետապնդում: Այնուհետեւ, չպետք է մոռանալ, որ Եվրոխորհրդարանի դիտորդները գտնվում էին տարածաշրջանում: Նրանց թյուրիմացության մեջ զգելու համար Ադրբեջանը պետք է որ ցույց տար հայերի «ադրեսիվությունը»: Իսկ նման հեղինակավոր դիտորդներ էլ կգան...

Հ.Գ. Ռեպորտաժը պատրաստ էր տպագրության, երբ ՆԳ բաժնից հաղորդեցին, որ փետրվարի 20-ի գիշերն ու ցերեկը սահմանագծում զինված միջադեպեր չեն արձանագրվել: Չնայած դրան՝ հայ մարտիկները պատրաստ են ամեն մի անակնկալի:

Խնձորեսկից, Ներքին Խնձորեսկից տեղեկացնում են, որ գյուղերում կյանքը վերադառնում է բնականոն հուն:

**ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
«Զանգեզուր» թերթ,
20 փետրվարի 1992թ.**



20 հունիսի 2014թ., Գորիսում հանդիսավորությամբ նշվեց 1-ին բանակային կորպուսի հիմնադրման 18-րդ տարեդարձը

Բանակը մեր տունն է, մեր ամրոցը

Ամփոփվեցին անցած ուսումնական տարվա արդյունքները

Հունվարի 14-ին գնդապետ Տիգրան Փարվանյանի հրամանատարությամբ գործող 1-ին զորամիավորման էնթալկա զորամասերից մեկում տեղի ունեցավ 2014թ. ուսումնական տարվա արդյունքների ամփոփումը, որի ընթացքում քննության առնվել էին մարտական պարտատարության, մարտական պարտատարականության, թիկունքի աշխատանքների, զինվորական կարգապահության և զորքերի ծառայության հարցեր:

Ամփոփմանը մասնակցում էին զորամիավորման հրամանատարությունը, զորամասերի ու ստորաբաժանումների հրամանատարները, Գորիսի կայազորի զինվորական իրավապահ մարմինների ներկայացուցիչներ:

Գնդապետ Տիգրան Փարվանյանի բացման խոսքից հետո զորամիավորման շտաբի պետ, գնդապետ Հովհիկ Ավագյանը զեկուցեց անցած ուսումնական տարվա զորամիավորման մարտական և զորահավաքային պատրաստակամության, մարտական հերթապահության, շտաբների, զորքերի ծառայության, հրետանու, սպաների ունակությունների և հմտությունների կատարելագործման, կապի միջոցների պահպանման, շահագործման և կատարելագործման, ամվտանգության կանոնների խստիվ պահպանման, հանկարծակի ստուգումների և շտաբային մարզումների, փաստաթղթերի մշակման և վերլուծությունների, անցկացված ստուգարքների, պահակային ծառայության, տեսական և գործնական պարապմունքների և դրանց արդյունքների մասին:

Չորամիավորման հրամանատարի մարտական գծով տեղակալ,

գնդապետ Միհրան Մախուդյանն իր զեկույցում անդրադարձավ անցկացված ցուցատրական մարտավարական զորավարություններին, մարտական պատրաստակամության միջոցառումների ընթացքում իրականացված ստուգումներին՝ կարեորելով անձնակազմի ընդունված մարտական հրաձգության ստուգարքների, ենթակա զորամասերի ստորաբաժանումներում անցկացված ներդաշնակումների, ֆիզիկական պատրաստակամության միջոցառումների, գործնական և մեթոդական օգնությունների, մարտական մեքենաների վարման, ձեռնամարտի հնարքների կիրառման կատարելագործման, անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ամրապնդման դերը:

Գնդապետ Մախուդյանը, ներկայացնելով լավագույններին և արձանագրված դրական արդյունքները, միաժամանակ նշեց թերությունները և դրանց վերացման ուղղությամբ առաջիկա անելիքները:

Չորամիավորման հրամանատարի՝ Վահրամ Գրիգորյանը ներկայացրեց իրականացված դաստիարակչական աշխատանքները և զինվորական կարգապահության վիճակը: Նշելով 2014թ. գրանցված դեպքապատահարների, բռնարարի, ինքնավնասման, կարգապահական տույժերի, խրախուսանքների մասին գնդապետն առաջնահերթ կա-



րելորդ գինձառայողների շրջանում բարոյահոգեբանական վիճակի բարելավման շարունակական գործընթացը, իրավապահ մարմինների հետ կապերի ամրապնդումը, իրավական թեմաներով պարապմունքների, բանակ-հասարակություն կապերի ամրապնդման ուղղված միջոցառումների անցկացումը:

Նա ընդգծեց նաև հրամանատարի անձնական օրինակի դերը, սպա-զինվոր, զինվոր-զինվոր միջանձնային փոխհարաբերությունների պատշաճ մակարդակի պահպանման անհրաժեշտությունը:

Չորամիավորման թիկունքի պետ, գնդապետ Արամ Պողոսյանը ներկայացրեց անցած ուսումնական տարվա թիկունքային ծառայությունների կատարած աշխատանքը, և դրանք գնահատելով բավարար՝ նախանշեց առաջիկա անելիքները:

Չորամիավորման սպառազինության և ռազմական տեխնիկայի վիճակը ներկայացրեց սպառազինության գծով ԲԿ հրամանատարի տեղակալ, գնդապետ Գարեգին Թորոսյանը:

անվանական ժամացույցներ: Պարզեատրման արարողության ժամանակ նախարար Սերյոժա Օհանյանն արժեքավոր դաշույնով պարզեատրեց նաև 1-ին ԲԿ հրամանատար, գնդապետ Տիգրան Փարվանյանին:

Նախարարի կողմից հուշանվերով պարգևատրվեցին նաև Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, մարզպետարանի, զինվորի-սարիատների, հասարակական կառույցների աշխատակիցներ, Գորիսի և Կապանի քաղաքապետներ:

ԲԿ մի շարք սպաներ պարգևատրվեցին մեդալներով: Չորամիավորման հրամանատար, գնդապետ Տիգրան Փարվանյանը, ամփոփելով խորհրդակցությունը, բննարկված հարցերի շուրջ կատարեց կարևոր հետևություններ, պարզաբանումներ, նշեց տեղ գտած թերությունները՝ նոր ուսումնական տարվա գերխնդիր համարելով մարտական պատրաստության և պատրաստակամության շարունակական ամրապնդումը՝ կարգապահության հետ զուգահեռ, որպես մեկ ընդհանուր նպատակ:

Չորամիավորման իր զեկույցում ավարտեց նախարարին հղված հավաստիացմանը, որ բանակային կորպուսը մարտունակ է և կկատարի ցանկացած խնդիր:

Այնուհետ, ՀՀ պաշտպանության նախարար Սերյոժա Օհանյանը, շնորհավորելով անձնակազմին Ամանորի կապակցությամբ, պարգևատրված զինծառայողներին, բոլորին մաղթեց ձեռքբերումների և նպատակների կատարման, խաղաղ պայմաններում խաղաղ արարման նոր ուսումնական տարի:

Նա նշեց, որ բանակ-հասարակություն, դպրոց, ուսումնական հաստատություններ կապի ամրապնդման, միասնական պայքարի արդյունքում այսօր ունենք ավելի մարտունակ և կարգապահ բանակ, ունենք հաջողություններ:

««Բանակը մեր տունն է, մեր ամրոցը» և «Հաղթանակի ժառանգորդները» միջոցառումների ներքո մենք պետք է միասնական պայքար ծավալենք ներսի արատավոր երևույթների դեմ և մեր գերակա խնդիրը համարենք փոքր ուժերով մեծ խնդիրներ լուծելը», – ընդգծեց նախարարը:

Սերյոժա Օհանյանը նոր ուսումնական տարին հայտարարեց մարտական կարողությունների զարգացման տարի, գերակա խնդիրը՝ յուրաքանչյուր զինվորի, սպայի ինքնուրույն, համարձակ գործողությունը, ճկունությունն ու արագաշարժությունը, սեփական դատողությունը կիրառելը, դիտարկելն ու կողմնորոշվելը՝ շեշտը դնելով խելամիտ պաշտպանության վրա:

«Բոլորի փոխարեն որոշում կայացնելը պետք է փոխարինել ինքնուրույն որոշում ընդունելով և անձնական պատասխանատվություն կրելով», – ասաց նախարարը:

Վերջում Սերյոժա Օհանյանը հստակ ցուցումներ տվեց 2015թ. կատարվելիք միջոցառումների վերաբերյալ:

ՀՀ ՁՈՒ գլխավոր շտաբի պետ, գեներալ-գնդապետ Յուրի Խաչատուրովն իր ելույթում նույնպես անձնակազմին շնորհավորեց նոր ուսումնական տարին հաջողություններով թեևակոխելու, անցած տարվա ունեցած ձեռքբերումների համար:

Գեներալ-գնդապետը՝ խոսելով կատարված աշխատանքների մասին, միաժամանակ հղեց մի շարք պատգամներ՝ բանակում մարդկային փոխհարաբերությունների ճիշտ կազմակերպման, բարիքացիական մթնոլորտի պահպանման, միմյանց հարգելու, հանդուրժելու ուղղությամբ, որի վերաբերյալ տվեց մի շարք խորհուրդներ:

ՍՈՒՍԱՆԱ ԲԱԲԱԶԱՆՅԱՆ

Տանակրթություն



ԼՍԱՌԵՍԵԱՒԻՐ Ի ՍՈՒՐԻՆՈՒՄ

Ներկայիս սերունդն ավելի ազատամիտ է

Գեղի գյուղական համայնքում 1989թ. սեպտեմբերին բացվեց հայկական դպրոց՝ ընդամենը 4 աշակերտով, և փնտրեն ընտրվեց ժենյա Խաչատրյանը: Սկզբնական շրջանում բավականին շարժուններ կային դպրոցի կայացման ճանապարհին: Ճիշտ է, շենքային պայմանները բավարար էին, բայց նախկինում այդպեղ սովորում էր 600-ից ավելի աղբյուրների աշակերտ, և վերաբնակների հետ եկած փարքերով ավանդույթների, վարքերի, աշխարհայացքի, անգամ բարբառների դրոշմ էր կրում դպրոցը, ինչն ավելի էր դժվարացնում մանկավարժական կոլեկտիվի աշխատանքը: Ինչեւէ, բազում դժվարություններ հաղթահարելով՝ այսօր դպրոցն արդեն ունի 25-ամյա պատմություն:



ԼՍԱՌԵՍԵԱՒԻՐ Ի ՍՈՒՐԻՆՈՒՄ

քեր հայերեն չգիտեին, որ ավելի էր դժվարացնում ուսուցումը: Սկզբնական շրջանում դասընթացներ էին կազմակերպում նաեւ ծնողների համար: Ներկայումս այլևս այդ խնդիրը չկա, քանի որ բոլորն արդեն ունեն հայկական կրթություն:

Դպրոցում, բացի 4-րդ դասարանից, բոլոր դասարաններն էլ առկա են, թեև կան ոչ լիարժեք դասարաններ: Ընդհանուր առմամբ դպրոցում կա 5.75 կոմպլեկտ դասարան:

Մանկավարժական կադրերի խնդիր չունեն: Դպրոցում աշխատում է 13 ուսուցիչ, որից 12-ը՝ բարձրագույն կրթությամբ: Դպրոցական բյուջեն բավարար է միայն աշխատավարձ տալու համար, այլ հատկացումներ չունեն: Դպրոցների ֆինանսավորման նոր կարգի համաձայն այս ուստարում հաստիքների կրճատում են արել, բայց աշխատող չի կրճատվել:

Տնօրենի հավաստմամբ՝ Գեղիի հանքավայրը վերագործարկելու դեպքում նախատրված կան, որ նոր ընտանիքներ կտեղափոխվեն գյուղ, ինչը կնպաստի դպրոցում աշակերտների թվի ավելացմանը, այլապես մի քանի տարուց դպրոցը կարող է գոյություն ունենալ միայն շենքի տեսքով: **«Պատճառներից մեկը, թերևս, այն է, որ այսօր գյուղացին հող ունի, բայց հնարավորություն չունի հողը մշակելու, պետությունը պիտի արտոնյալ պայմաններ ստեղծի գյուղատնտեսության զարգացման համար: Գյուղացին չարչարվում է, բայց միսը, կաթը**

չի կարողանում իրացնել», - Գեղեցիկ դպրոցի տնօրենը:

Համայնքապետարան-դպրոց սերտ համագործակցությունն ավելի է նպաստում դպրոցի գործունեությանը: Արդեն մի քանի տարի է՝ դպրոցի աշակերտների դասագրքերի գումարը փոխանցում է Գեղիի գյուղապետ Վասիլ Գրիգորյանը, վերջինիս աջակցությամբ լուծվել է նաև աշակերտների տետրերի հարցը: Դպրոցականների էքսկուրսիաների, զանազան միջոցառումների կայացման գործում նույնպես մեծ է համայնքապետի ներդրումը:

«Dasaran.am» կրթական ծրագրին դպրոցը միացել է, նույնիսկ անցյալ ուստարում հանրապետությունում 35-րդ տեղն են զբաղեցրել, եւ, ըստ սահմանված կարգի, մինչև 50-րդ տեղ զբաղեցնողը մրցանակ պիտի ստանա, սակայն մինչ օրս դպրոցը չի ստացել իր մրցանակը: **«Ուսուցիչները մեծ մասամբ երիտասարդ են, և համակարգչին տիրապետելու որեւէ դժվարություն չի առաջանում: Մինչև տուն գնալը տեղում բոլորը հիմնականում կատարում են ծրագրի ամենօրյա պահանջները»**, - Գեղեցիկ տնօրենը:

Ուսուցիչների մեծ մասը քաղաքացիական է, Ջանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատի հովանավորությամբ տրանսպորտն անվճար է, ինչը մեծ առավելություն է, քանի որ գյուղական դպրոցներում աշխատող ուսուցիչներն իրենց ստացած չնչին գումարի մի մասը ստիպված տալիս են տրանսպորտին:

Դպրոցի առաջնային խնդիրը

տանիքի հիմնանորոգումն է եւ ջրի բացակայությունը: Տանիքի հիմնանորոգման համար դիմել են մարզպետարան, կազմվել է նախագիծ-նախահաշիվ: Այդ հարցը պիտի լուծվեր դեռևս անցած ուսումնական տարում, բայց ինչ-ինչ պատճառներով հատկացում չեղավ: **«Ավելիալում են, որ 2015թ. դպրոցի տանիքի եւ ջրի հարցը կլուծվի, քանի որ մարզպետ Սուրեն Խաչատրյանը մեծ ուշադրություն է դարձնում դպրոցների խնդիրներին եւ հնարավորության սահմաններում տալիս դրանց լուծումը»**, - Գեղեցիկ տնօրենը:

Ջրի խնդիրը միայն դպրոցին չէ, այն կարելի էր հարց է նաեւ համայնքի համար: Երկու է, դասասենյակներում եռացրած ջուր են դրել աշակերտների ծարավը հագեցնելու համար, բայց գործող սանհանգույցներ չկան, ինչը սանիտարահիգիենիկ խնդիրներ է ստեղծում: Հուսով ենք, այդ հարցը շուտով լուծում կստանա:

Ամօրեային եղանակին տանիքի գրեթե բոլոր հատվածներից ջուր է կաթում փչացնելով շենքը, գույքը:

Քանի որ շենքը բավականին մեծ տարածք է զբաղեցնում, եւ ամբողջովին վերանորոգման համար շատ միջոցներ են անհրաժեշտ, ուստի նախատեսվում է հիմնանորոգել միայն շենքի մի մասը եւ մարզադահլիճի տանիքը: Տնօրենն ուսումնական գույքի թարմացումը խնդիր չի համարում. շենքը հիմնանորոգելուց հետո տարբեր ծրագրերով կարող են գույք ձեռք բերել: Դիդակտիկ նյութերի, ծրագրերի խնդիր չունեն, ժամանակին ստանում են ուսումնաստանողական գրականություն: Լաբորատորիա դպրոցում կարելի է ասել չկա, քանի որ եղած նյութերը վաղուց հնացել են, անհրաժեշտ է թարմացնել պաշարը: Քիմիայի, կենսաբանության երիտասարդ ուսուցչուհի Նարինե Թադևոսյանի խոսքով՝ նորմալ լաբորատորիա ունենալու դեպքում աշակերտներն ավելի մեծ հետաքրքրությամբ կսովորեն բնագիտական առարկաները:

Միջին դասարաններում ուսման որակը միջինից բարձր է: **«Ես ուսուցիչներին ասում եմ, որ աշակերտը պիտի դասարանում դասը սովորի, քանի որ քաղաքի դպրոցների մասն մեկ դասարանում 30 եւ ավելի աշակերտ չկա: 1-2 հոգանոց դասարանում 45 րոպեն լիովին բավարար է եւ յուրաքանչյուր ամփոփելու, եւ նոր դասը յուրացնելու համար»**, - Գեղեցիկ տնօրենը:

Ավելի փորձառու ուսուցիչները պնդում են, որ աշակերտները շատ անտարբեր են դարձել ուսման հանդեպ: Բացի դրանից՝ տարբեր կազմակերպություններ իրենց ծրագրերն ի կատար ածելու համար հիմնվում են դպրոցների վրա: Անընդհատ դպրոցը ստանում է գրություններ՝ շարադրություններ գրելու, տարբեր միջոցառումներ անցկացնելու վերաբերյալ: Ծրագրերի ղեկավարները մոռանում են, որ այս դեպքում գործ ունեն սակավաթիվ աշակերտներով դպրոցների հետ. չէ՞ որ այստեղ միշտ նույն աշակերտն է մասնակցում զանազան միջոցառումներին, ինչը խանգարում է ուսման որակի բարձրացմանը:

Գյուղը հեռու է քաղաքից, եւ աշակերտները հետ են մնում մշակութային կյանքից, որի բացը լրացնում է դպրոցը՝ կազմակերպելով հետաքրքիր միջոցառումներ, ինչպես նաև դպրոցում գործող տարբեր խմբակների միջոցով: Վերջերս դպրոցը մասնակցել է ԿԳՆ-ի եւ Մայր աթոռ Սուրբ Եջմիածնի կազմակերպած առակների բեմադրության մրցույթին՝ ներկայացնելով աստվածաշնչյան «Աղբատ Դագարոսը» առակը եւ «Ավետարանական առակները հայ դպրոցում» միջոցառմանը մասնակցելու համար արժանացել շնորհակալագրի:

Վերջին 4-5 տարում գյուղից 9 ըն-

տանիք է դուրս եկել, որից 2-ը մեկնել է Ռուսաստան: Դատարկ տները գնալով մեծ թիվ են կազմում:

«Ուսուցիչ մասնագիտությունն այնպիսին է, որ պահանջում է անմնացորդ նվիրում: Թեկուզ գրպանը դատարկ լինի, նա աշխատում է, ձգտում իր գիտելիքների, հմտությունների պաշարը փոխանցել աշակերտներին: Պետությունն ըստ արժանվույն չի գնահատում ուսուցչին, աշխատավարձը մանավանդ ոչ լիարժեք դասարաններ ունենալու պայմաններում բավարար չէ: Երբեմն ուսուցիչները բողոքում են, թե ինչ կապ ունի 2 թե 32 աշակերտի հետ եւ աշխատում, միեւնույն է, 45 րոպե լիարժեք դասապրոցես եւ անցկացնում եւ դրա համար ավելի քիչ վարձատրվում, քան մեծ դպրոցներում», - Գեղեցիկ փոխտնօրեն Անուշ Առաքելյանը: Նա հավելեց, որ երիտասարդ ուսուցիչներն էլ նվիրումով են աշխատում, ճիշտ է, սկզբնական շրջանում շատ խնդիրներ են ծագում, բայց, միմյանց օգնելով, աստիճանաբար խնդիրները լուծվում են: Նա Գեղեցիկ, որ երկայիս սերունդն ավելի ազատամիտ է, անկաշկանդ է շփվում ուսուցիչների հետ, ժամանակակից տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս ավելի հետաքրքիր դարձնելու ուսուցումը, եթե, իհարկե, աշակերտները դրանք նպատակալին են օգտագործում: **«Մեր օրերում այնքան էլ հեշտ չէ աշակերտին ստիպել բոլոր առարկաները համաչափ ուսումնասիրել, պետք է հաշվի առնել աշակերտի ընդունակությունները եւ պահանջել հնարավորության սահմաններում: Միանշանակ ասել, թե չեն կարողանում, չեն սովորում, ճիշտ չի լինի: Շատ աշակերտներ կան, որքան հասկանալով են ընթացում հիմնարկական գրականությունը, ոմանք ընթացում են, բայց ամբողջովին չեն յուրացնում»**, - Գեղեցիկ Անուշ Առաքելյանը:

Երիտասարդ ուսուցչուհի Նարինե Թադևոսյանը խոստովանեց, որ մտավախությամբ է մտել դպրոց կարծելով, թե երեխաների հետ դժվար կլինի ընդհանուր լեզու գտնել, բայց կարողացավ հաղթահարել նախնական դժվարությունները, քանի որ ամենաառաջնայինը երեխաներին շատ սիրելն է: **«Աշակերտները ակտիվ են մասնակցում դասապրոցեսին, հետաքրքրասեր են, հատկապես միջին դասարաններում ավելի պատասխանատվությամբ են վերաբերվում առարկային, իսկ բարձր դասարաններում, պայմանավորված արդեն նախահիմուն առարկաներով, երբեմն նվազում է հետաքրքրությունը այլ առարկայի նկատմամբ»**, - Գեղեցիկ Գեղեցիկ:

Գյուղական դպրոցի աշակերտներն ավելի պարզամիտ են, ավելի հարգանքով են վերաբերվում ուսուցչին ու նրա աշխատանքին: Այստեղ տիրում է աշխատանքային առողջ մթնոլորտ, երիտասարդ ուսուցիչ յուրաքանչյուր բացթողման ավելի փորձառու ուսուցիչները ընթացումով են մոտենում. չէ՞ որ ժամանակին իրենք էլ են երիտասարդ եղել: Դպրոցում Վազգեն Սարգսյանին, Մոնթե Մելքոնյանին նվիրված, Հայրենական մեծ պատերազմի, Շուշիի ազատագրման, պատանի երկրապահների եւ այլ թեմաներով հետաքրքիր անկյուններ են ստեղծվել, պարբերաբար կազմակերպվում են բազմաբնույթ են բազմաբովանդակ միջոցառումներ: Դպրոցի փոխտնօրենի խոսքով՝ նախատեսվում է դպրոցում սրահ բացել, որտեղ կներկայացվեն տարբեր աշխատանքներ:

Իսկ վերջում ուսուցչի այն հարցին, թե ինչ էս դառնալու, դպրոցի աշակերտներից մեկը պատասխանել է՝ Հայոց բանակի զինվոր:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Դպրոցում աշխատելն ի վերուստ փրված առաքելությունն է

ՆՈՐԵՅԱՆ

Մարդու իսկական կյանքը սկսվում է 50 փարեկանից հետո, քանզի մարդն այդ փարեկաններին ստեղծում է այն ամենը, ինչի վրա խարսխվում են ճշմարիտ նվաճումները, ձեռք է բերում այն, ինչ կարելի է փախուցնել, ճանաչում այն, ինչ կարելի է սովորեցնել, հարթում այն, ինչի վրա կարելի է կառուցել:



ԼՈՒՍՏԱՎՈՐԱԿ Գ. ՄԱՍԻՍՅԱՆ

Կան մասնագիտություններ, որոնք մշտապես հասարակության ուշադրության կենտրոնում են: Թե որքանով հաջողություն կունենան, ցույց կտա ժամանակը, բայց ուսուցչի մասնագիտությունը երբեմն դուրս է գալիս ժամանակի եւ տարածության սահմաններից, քանի որ ուսուցիչ ծնվում են, ոչ թե դառնում:

Խորեն Տեր-Ստեփանյանը հայարտությամբ է նշում, որ իր կյանքի եւ ոչ մի օր երեւելից ընտրած մասնագիտության համար չի զղջացել: Երկար տարիներ աշխատելով երեխաներին ուսուցանելու եւ դաստիարակելու բարդ ու պատասխանատու ոլորտում նա չի բողոքել, թեպետ խոստովանում է, որ շատ խոչընդոտների է այդ ընթացքում հանդիպել:

Ծնվել է 1955թ. հունվարի 12-ին Գորիս քաղաքում, հայրենադարձների ընտանիքում: Ծնողները Պարսկաստանի Ղարաղաղ նահանգից գաղթել են Խորհրդային Չայաստան 1946թ.: Գորիսի լեռներն էին պատճառը, որ նրանց ընտանիքն իջեալանց այնտեղ (իրենց ծննդավայրն էլ ունի այդպիսի բնություն): Խորեն պապը Ղարաղաղի նահանգի չորս հայաբնակ գյուղի եկեղեցիների քահանա էր, բայց նույնիսկ այնտեղի հայերի տեղափոխվելուց հետո պապը չի եկել Չայաստան: Նա ասում էր, որ քանի դեռ Ղարաղաղում մեկ հայ կա, ինքը կմնա այնտեղ:

1958թ. ընտանիքով տեղափոխվել են Կապան, իսկ 1962-72թթ. սովորել եւ ավարտել է Կապանի N 9 դպրոցը, այնուհետեւ ընդունվել Երեւանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի ֆակուլտետը: 1976թ. ավարտելուց հետո գործուղվել է Սեւաքարի 8-ամյա դպրոց՝ մաթեմատիկայի ուսուցիչ: Այնուհետեւ աշխատել է Ագարակի, Սյունիքի դպրոցներում: 1989-96թթ. եղել է Աճառանի միջնակարգ դպրոցի տնօրեն: Դպրոցը ղեկավարելու տարիները համընկան Չայաստանի համար դժվարին տարիների հետ: Դարավերջին սկիզբ ամած Արցախյան պատերազմի տարիներին Աճառանում մշտապես հնչեց դպրոցական զանգը: «Ուսուցիչներն ամեն օր կոմբինատի թունելով կամ Կավարտի սարով ոտքով գալիս էին դպրոց, նույնիսկ ապաստարանում ենք դաս պարապել: Դեռաբջիքին այն էր, որ այդ տարիներին ոչ մի ուսուցիչ չէր հիվանդանում, այլ անձնուրաց գործունեություն էր ծավալում»: Այդ ժամանակ չափազանց փախստականների համար նույնպես հայերեն ուսուցում էին կազմակերպում:

Պատերազմին յուրովի է մասնակցել՝ թիկունքում դպրոց պահելով, սահմաններ սնունդ, տաք հագուստ ուղարկելով: Մասնավորապես 1980-ական թվականների վերջին դպրոցում աշխատելը, բացի ուսում-

նադաստիարակչական աշխատանքից, նաեւ պահանջում էր ազգային հարցերի բարձրացում: Սյունիքի դպրոցում սովորում եւ աշխատում էին մեծ թվով աղքատացիներ, ովքեր ազգամիջյան բախումների առիթ էին ստեղծում. մոտ էին այն օրերը, երբ պետք է սկսվեր ազգային շարժումը: Այդ դժվարին օրերին նա կարողացավ դպրոցում քիչ թե շատ խաղաղություն ապահովել՝ թույլ չտալով, որ լուրջ բախումներ առաջանան:

Գործունեության մի որոշ ժամանակահատված կրթական ոլորտին չի առնչվում. 2000-2003թթ. աշխատել է «Հալիձոր» համատիրության մասնագահ, երբ դեռ համատիրությունները մոր էին կազմավորվում: Բայց դպրոցում աշխատելն ի վերուստ տրված առաքելությունն էր, եւ ողջ գիտակցական կյանքը երեխաների հետ անցկացրած մարդը չէր կարող հեռանալ այդ ամենից: 2004 թվականից առ այսօր Գեղիկի միջնակարգ դպրոցի տնօրենն է եւ վայելում է ուսուցչական եւ աշակերտական կոլեկտիվի հարգանքը:

Տարբեր առիթներով արժանացել է պատվոգրերի, շնորհակալագրերի, «Ակսել Բակունց» հուշամեդալի, ինչպես նաեւ «Ավագ ուսուցիչ» կոչման:

Ինչպես յուրաքանչյուր գիտակից հայ մարդու, Խորեն Տեր-Ստեփանյանին նույնպես մտահոգում է մեր երկրում ծայր առած արտագաղթը. «Ես ցավում եմ, երբ ամեն անգամ լսում եմ մեր երկրում արտագաղթի մեծ չափերի մասին: Պետք է մեզինք յուրաքանչյուրն իր հնարավորության սահմաններում նպաստի մեր երկրի զարգացմանը, որ խուսափենք այնպիսի արատավոր երեւույթներից, ինչպիսին արտագաղթն է: Հայ ազգը տաղանդավոր է, եւ նրա պոտենցիալը պետք է օգտագործել սեփական երկրի հզորացման, կայունացման համար»:

Երեք երեխա, ութ թոռ ունեցող երկարամյա ուսուցիչն ամեն օր մտնում է դպրոց այն առաքելությամբ, որ դպրոցում սովորող ամեն աշակերտ, նախեւառաջ, իր երեխան է, եւ ուսուցիչն աշխատում է մարդ ձեւավորելու ամենապատասխանատու խնդրի վրա:

Շնորհավորելով Խորեն Տեր-Ստեփանյանին ծննդյան 60-ամյակի կապակցությամբ՝ մաղթում ենք քաջառողջություն, տոկունություն, անսպասելի եռանդ, որ կարողանա գյուղում դպրոցի պահպանության գործը պատվով կատարել:

ՍՆՈՒՇ ԱՌԱՔԵԼՅԱՆ



ԼՈՒՍՏԱՎՈՐԱԿ Գ. ՄԱՍԻՍՅԱՆ

Մեղրի



ՍՈՐԻԵՏԱ ՇԱՀԻՆՅԱՆ

Հայերը սովորություն ունեն պարծենալու իրենց հեռավոր ու փոքրիկ Մեղրի գավառով: Նույնիսկ նրանք, ովքեր իրենց աչքով չեն տեսել Մեղրին, անպայման ուրախ դեմք կընդունեն:

- Մեղրի՞ն: Հիանալի շրջան է, կուլտուրական շրջան: «Կուլտուրական» ածականը այնպես է ծուլվել այդ գավառին, որ Մեղրին մեր երեւակայության մեջ աստիճանաբար վերածվում է Ատլանտիդայի: Անես քաղաքներով, հիմնարկներով, դպրոցներով մի ամբողջ երկրամաս է ջրասույզ եղել հեռու, անմատչելի լեռներում, իսկ նրա շուրջ վայրի, ամայի տարածություններ են գյուղեր, ուր շինականը գոմշի հետ է թնել, եւ տրախտման է կերել նրա աչքերը: Եվ այդ Ատլանտիդան ոչ մի թելով կապված չէ շրջապատի հետ, նա չի սովորեցնում, չի կազմակերպում, իր «կուլտուրականությունը» չի հաղորդում հարեւան հայկական գավառներին ու աղքատիկ Նախիջևանի նահանգին: Ատլանտիդայի հետ համեմատությունը կարելի է երկար շարունակել:

Մեղրին պրկված է երկրի տնտեսական շրջանառությունից, եւ նրա կուլտուրականությունը զուրկ է տնտեսական որեւէ հիմքից: Հայկական այդ փոքրիկ գավառը այս իմաստով կարող է հետաքրքրել արդեն ոչ միայն որպես տեղական տեսարժան վայր, այլեւ որպես համատնտեսական հետաքրքրագույն երեւույթ:

Ամբողջ գավառը նեղ կիրճի ձեւով ձգված է մի քանի վերստի վրա: Նրա

աջ եւ ձախ կողմերում կանգնած են մերկ լեռներ, որոնք նման են խիտ մազերի միջից դուրս ցցված ցուլի եղջյուրների, ներքեւում այգիների թավ կանաչն է, վերեւում՝ քարքարոտ, ուղղաբարձ, գրեթե ուղղահայաց ժայռեր: Այդ ժայռերում ապրում են քարայծեր, որոնց որսը մեղրեցիների սիրած զբաղմունքն է: Այնտեղ նաեւ հովազ է պատահում, վերջերս մի որսորդ հայարտությամբ ցույց էր տալիս իր ռազմավարը՝ զարկած հովազի մորթին:

Գավառի կենտրոնը՝ Մեղրին, գտնվում է Արաքսից ոչ հեռու, համարյա կիրճի մուտքի մոտ: Այնուհետեւ, կիրճի մեջ խորանալով, միայնց հետեւում են մի քանի գյուղեր, ընդհուպ մինչեւ Կարծեւան, որը հայտնի է իր նշանավոր կարծեւանյան քաղցր գինով: Այդ է ամբողջ գավառը: Նա հող չունի, օգտակար համածուրեղ չունի, անասուններ էլ համարյա թե չունի, իսկ ինչ ունի՝ միմաստյուր քանակով է, ինչպես չինացիների մոտ, երեք արշինի չափ:

Տղաներն ու աղջիկները ջանասիրաբար սովորում են յոթնամյաներում՝ երազելով ընդունվել բարձրագույն ուսումնական հաստատություններ: Իսկ մեղրեցու տունը զարմանք կպատճառի ձեռք: Ես շարունակ խոսում եմ քաղաքի մասին, բայց ընթերցողը պետք է հիշի, որ Մեղրին գյուղ է, եւ որ նման բնակավայրերը հայկական մասշտաբներով իրենցից ներկայացնում են սակավ դեպքերում կավածոթի, իսկ ավելի հաճախ՝ գետնափոր բներ, որտեղ ամբողջ ընտանիքին բաժին է ընկնում անլուսամուտ մի սենյակ, եւ այդ սենյակում օջախի ծուխը բարձրանում է դեպի առաստաղ, կուտակվում, կախվում բարձր զանգվածով՝ չկարողանալով ամբողջովին դուրս գալ երդիկից: Իսկ ահա մեղրեցու բնակարանը, ի հակադրություն սովետական հայկական կացարանի, երկու-երեք հարկանի լավ տուն է, երկու եւ հաճախ նույնիսկ երեք հյուրասենյակներով, որոնք ընդարձակ են, կահավորված են փափուկ կահույքով, խալիներով, հրաշալի թավշով կամ Շամսխու մետաքսով երեսապատված թախտերով, դաշնամուրով, գրամաֆոնով, գրադարանով... Եվ սկսում ես մտածել, թե ի՞նչ է սովորեցնում հատակը, ընկել Ատլանտիդա...

Ինչպե՞ս, ո՞ր ճանապարհներով

եւ ի՞նչ միջոցներով են կարողացել այստեղ հասցնել այդ փափուկ կահույքն ու դաշնամուրը:

Մի քանի իդեալիստ-մարդու-նիկներ, ուսուցիչներ եւ գրագետներ մի ժամանակ իրենց ձեռքն են վերցրել գավառի հասարակական իշխանությունը, եւ օգտագործելով ժամդարներից հեռու գտնվելու համագամաքը, ժողովրդին տվել են ինչ կարողացել են ու ամենազխալոր՝ գրագիտություն, գրագիտություն, գրագիտություն: Եվ գրագիտության հետ մեկտեղ աճել է մեղրեցիների կենցաղային պահանջկոտությունը: Դրան մեծապես օժանդակել է նաեւ այն փաստը, որ Մեղրու պայմաններում հարստանալ գրեթե հնարավոր չէ: Ուստի եւ հարստություն դիզելու պրոցեսը չի կարող նպատակ դառնալ գործունյա մեղրեցիների համար:

Եվ նրա զարգացումը ընթացել է ոչ թե դրան կուտակելու ուղղությամբ, այլ կենցաղային պահանջկոտության բարձրացման, կուլտուրական բյուրեղի հարստացման գծով: Այլ կերպ ասած, գավառը զարգացել է սոխիկ ինտելիգենտական շավիղով: Քիչ փողով հարուստ չես դառնա, բայց ավելի լավ ապրել կարող ես. ահա մեղրեցու հոգեբանությունը: Եվ նա սկսել է ավելի լավ ապրել:

Վերջերս համաձայնեցնական մասշտաբով մշվեց Մեղրու կոոպերատիվի հիմնադրման 25-ամյակը: 1901թ. մի խումբ ռազմավարներ Ե.Վարդանյանի գլխավորությամբ բացել են այդ կոոպերատիվը, առանց որակյին վնաս հասցնելու, մի հանգամանք, որով այսօր իրավամբ հպարտանում են մեղրեցիները:

Այդ արտաքին ունեւորությունը եւ կուլտուրական կենցաղի առկայությունը զայթապկության մեջ են գցում տեղական իշխանություններին, երբ նրանց պետք է դիֆերենցել կուլակներին: Այս տարի տեղ են գտել ընտրական իրավունքներից զրկելու միանգամայն անհիմն ու սխալ դեպքեր: Ծիշտ է, սխալն իսկույնեւթ ուղղվել է, բայց դաժան հարված է հասցվել հնաբնակ մեղրեցիների ինքնասիրությանը:

Փորձեք մի երկու օր ապրել այդ «կուլակներից» որեւէ մեկի տանը: Ընտանիքի բոլոր անդամները արթնանում են արեւադարձից առաջ, իսկ տանտիրուհին գրեթե չի քնում: Տունը, ինչպես եւ ամբողջ Մեղրին պարտված է շերամի քաղցր հոտով: Տան ամենամալավոր ու ամենատաք սենյակը հատկացված է շերամի որդին: Կահույքը լրիվ համված է այդ սենյակից: Հատակով մեկ փռված են թեթև ոստեր, որոնց վրայում, կոյուր գլխիկները շարժելով, սողում են անկուշտ շատակերները՝ հասած թթի նման սպիտակափայլ որդերը: Եվ ինչպե՞ս են ուտում: Յոթ-ութ անգամ, օր ու գիշեր, էլը բարձած թթի ոստեր են բերում, եւ տանտիրուհին յոթ-ութ անգամ թեթևու թարմ ոստերով փոխում է կրծկած-լպստված ճյուղերը: Այդպես՝ 28-30 օր շարունակ, որից հետո հատակը ծածկում են չոր ցախավելի ճյուղերով, որդերը տեղափոխվում են դրանց վրա եւ սկսում բոժոժավորվել... Դժվար է պատմել, թե որքա՞ն ծանր աշխատանք է դա, որքա՞ն հոգս է պահանջվում, քանի-քանի անքուն գիշերներ խլում: Եվ արդյունքն ի՞նչ է: «Բոժոժների բերքը» լավագույն դեպքում ընտանիքին բերում է հարյուր ռուբլի: Իսկ այդ հարյուր ռուբլին, ավելացրած տարեկան աղքատիկ բյուրեղին, հսկայական գումար է մեղրեցի «կուլակի» համար, գումար, որը արդարացնում է ամբողջ ընտանիքի անքուն աշխատանքը:

Շուտով Մեղրու մոտով կանցնի Ջուլֆայի երկաթուղին: Դա հնարավորություն կտա այնտեղ զարգացնելու պահածոների արդյունաբերություն եւ շուկա կբացի Մեղրու մրգերի համար:

1927թ.

Երբ է իջնելու հացի գինը եւ իջնելո՞ւ է արդյոք

Ստառողական շուկա

Հացի խնդրի վերաբերյալ մեր հարցումին կենսաթոշակառու Ավետա Առաքելյանը միանգամից վրդովմունք հայտնեց. «Մեղք է եւ ժողովուրդը, վերջապես ի՞նչ է մտածում հանրապետության ղեկավարությունը: Ի՞նչ աշխատավարձ ենք ստանում, որ գներն ամեն օր բարձրացնում են: Վերջապես պիտի մարդավայել ապրե՞նք, թե՞ օդ չնչենք: Ցեղասպանության մասին են խոսում, հիմա է ցեղասպանությունը: Թողակառու կին եմ, ամուսինս՝ 1993 թվականին ռեպակոնտրոլի գոհված, տունս՝ քարուքանդ: Ոչ մեկին մեզ նման ընտանիքների խնդիրը չի հուզում: Ոչ մեկը մեր մասին չի մտածում: Գոնե հացի գինը մատչելի լինի հասարակ ժողովրդի համար»:

Խնդիրը նաեւ ենթատեստ ունի. ինչպես գրել էինք մեր թերթի («Այունյաց երկիր», N35, 2014 թվական) ղեկտեմբերի 27-ի համարում, հացարտարողների հետ հոկտեմբերի 7-ի հանդիպման ժամանակ, որ նախածեռնել էր Այունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, որոշվել էր նախկին 500 գրամանոց հացը դարձնել 600 գրամ եւ վաճառել 240 դրամով: Այսօր բախվում ենք մի իրողության, երբ հացի գինը բարձրացել է,

իսկ քաշը՝ ընկել: Մեր ստուգայցի ժամանակ վաճառողուհիներից մեկը հայտնեց, որ մարզպետի որոշումից հետո հացը կշռում էր 550-580 գրամ, իսկ այս օրերին քաշը հիմնականում տատանվում է 510-520-ի սահմաններում: Պատահել է, երբ խմբագրության պահանջով տարբեր վաճառատներում կշռված հացի քաշը հասել է 550 գրամի կամ նույնիսկ 500 գրամ չի եղել:

Ուզում ենք խնդրո առարկայի առնչությամբ մի շեղում կատարել. հացի թանկացման հետ կապված նման իրավիճակ տարեվերջին ստեղծվել էր նաեւ Ռուսաստանում: Ինչպես հայտնում է «Аргументы и факты» պարբերականը (ղեկտեմբեր, 2014թ., N 51), խոշոր առևտրական ցանցերի ղեկավարները մատակարարներից ծանուցում էին ստացել, որ հացարտարողության հետ կապված ամեն ինչի (այլուր, շաքար, դրոժ (թթմանը), փաթեթավորում) թանկացումից ելնելով՝ հացի գները բարձրանալու են: Ինչպես նշում է թերթը, այս անգամ Ռուսաստանի Դաշնության հակամենաշնորհային ֆեդերալ ծառայությունը փաստին շատ արագ արձագանքեց: Ծառայությունը հանդիմանոր ստուգումներ սկսեց հացարտարողների շրջանում: Իրականում, թերթի փոխանցմամբ, ինչպես

կարող է հացի գինը բարձրանալ, երբ 2014-ին Ռուսաստանում ցորենի ռեկորդային բերք են ստացել, ավելի քան 104 մլն տոննա, 12 մլն տոննա ավելի, քան նախորդ տարում, շաքարով երկիրը իրեն ապահովում է, իսկ թթմանը կազմում է հացի գնի մեկ-երկու տոկոսը: Սա Ռուսաստանի Դաշնությունում:

Իսկ մեզանո՞ւմ: Կառավարության ղեկտեմբերի 18-ի հերթական նիստի ժամանակ վարչապետ Յուրի Լերախանյանը հորդորեց ամենայն խստությամբ մոտենալ շարաշահումներին՝ հավելելով, որ կառավարությունն անհիմն թանկացումներ չի հանդուրժելու: Նաեւ հանձնարարել էր ապրանքների թանկացման վերաբերյալ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական (ՏՄՊ) հանձնաժողովի նախագահ Արտակ Շաբոյանին՝ մանրամասն ուսումնասիրել որոշ ապրանքատեսակների առևտուրն ամենօրյա կտրվածքով: Այս ամենը ղեկտեմբերին էր: Թե ինչ տվեցին վարչապետի հորդորներն ու հանձնաժողովի ստուգումները, բոլորիս է հայտնի: Հունվարին ավարտվում է, բայց շատ ապրանքատեսակների, այդ թվում նաեւ հանապազօրյա հացի գինը շարունակվում է բարձր մնալ:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ



Պատվավոր կոչում

ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Գաբրիել Ղազարյանի 2014թ. ղեկտեմբերի 22-ի հրամանով Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի (ՀԱՕԿ) Այունիքի մարզի ներկայացուցչության տնօրեն, աթլետիկայի ֆեդերացիայի գործադիր տնօրեն Արշամ Սերյոժայի Սարգսյանին շնորհվել է ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պատվավոր աշխատողի կոչում:

Շնորհավորում ենք եւ մաղթում նոր հաջողություններ: Արշամ Սարգսյանը ծնվել է 01.12.1970 թ., Կապանում, բանվորի ընտանիքում: 1978-1988թթ. հաճախել է ավարտել է Կապանի N3 ռուսական միջնակարգ դպրոցը: 1988-1992թթ. սովորել է ավարտել է Երեւանի ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը: Բուհն ավարտելուց հետո աշխատանքի է անցել Կապանի շրջանի Դոկուսի գյուղական դպրոցում՝ ֆիզկուլտուրայի ուսուցիչ, նաեւ՝ արհիվոյի նախագահ:

1993-1994թթ. ծառայել է Սեղրու սահմանապահ ջոկատում, արժանացել կրծքանշանների եւ այլ խրախուսանքների:

Չորսըսվելուց հետո աշխատանքի է անցել Կապանի N11 միջն. դպրոցում՝ ֆիզկուլտուրայի ուսուցիչ:

2008թ. աշխատել է Կրթության ազգային ինստիտուտի Կապանի մասնաճյուղում՝ վերապատրաստող մասնագետ:

2009-13թթ. աշխատել է Կապանի քաղաքապետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի բաժնի մասնագետ: Այդ տարիներին Կապան քաղաքային համայնքը ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական համայնք» 2009թ. մրցույթում զբաղեցրել է երկրորդ հորիզոնականը, իսկ 2011թ. ճանաչվել հաղթող եւ արժանացել ՀՀ նախագահի վկայագրի, 1000000 /մեկ մլն/ դրամ պարգևի ու նախարարի շնորհակալագրի:

2011թ. հունվարից գայսօր Այունիքի մարզի աթլետիկայի ֆեդերացիայի գործադիր տնօրենն է: Վերը նշված ժամանակում ֆեդերացիան կազմակերպել է բազմաթիվ քաղաքային եւ հանրապետական միջոցառումներ, բազմաթիվ ուսումնամարզական հավաքներ Կապանի աթլետիկայի մասնագիտացված մանկապատանական մարզադպրոցի սաների համար եւ հասել լուրջ արդյունքների: Օրինակ, 2013թ. Իտալիայում (ք. Ռիեթի) կայացած Եվրոպայի առաջնության եռացատկ մրցաձևում Լեւոն Աղասյանը փայլուն հաղթանակ տարավ, իսկ 2014թ. ԱՄՆ-ում (ք.Երեւան) աշխարհի առաջնությունում 5-րդ հորիզոնականը գրավեց:

2013թ. նոյեմբերի 1-ից ՀԱՕԿ-ի Այունիքի մարզի ներկայացուցչության տնօրենն է:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Այդպես մինչեւ ո՞ւր...



Հայոց թագավոր Արտավազը թշնամիներից պաշտպանելու համար իր գանձերը թաքցնում է մի լեռան մեջ, եւ վայրն այն կոչվում է Գանձասար: Գանձերի բանալին հանձնվում է լեռների փոխակալ արջին, որ բանալին փոխանցելու էր միայն նրանց, ովքեր այդ գանձերը կօգտագործեն ի նպաստ ժողովրդի: Սա ավանդապատումն է: Իսկ փարիներ առաջ քանդակագործ Մարտի Նուրիջանյանը կերպեց արջի քանդակը, որ փեղադրվեց Ողջու կիրճում՝ մի քարածայրի վրա: Արջի բանալին, հավանաբար հրազենի կրակահերթով, երբեմն անհետանում էր, ի վերջո սրտացավ մարդկանց միջոցով վերստին գտնում իր փեղը:

Եվ սրանով քանդակի հետ կապված ողիսականը չի ավարտվում: Վերջերս նկատեցինք, որ արջի քանդակի դեմ-դիմաց, որտեղ Ողջի գետը ծունկ է տալիս, աղբատեղի է գոյացել: Բանն այն է, որ այդտեղ սառնորակ աղբյուր կա, մանավանդ ամռան

վրդությունը բացառում է: Բայց այդպես մինչեւ ո՞ւր... Գուցե տարածքում տեղադրվի աղբարկղ, եւ ամսական մեկ-երկու անգամ կատարվի աղբահանություն: Այլապես աղբատեղին սպառնում է նոր տարածքներ գրավել:

Մեր հարցմանն ի պատասխան՝ Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեւորգյանի փոխանցմամբ՝ վայրը, որտեղ տեղադրված է արջի քանդակը, մտնում է Լեռնաձոր համայնքի վարչական տարածքի մեջ: Քաղաքապետը հայտնեց, որ իր մեջ ցանկություն էր առաջացել հողով ծածկել տալ այդ աղբատեղին, բայց ի՞նչ երաշխիք, որ անպատասխանատու մարդիկ չեն շարունակելու իրենց սեւ գործը: Լեռնաձորի գյուղապետ Ստեփան Պետրոսյանը խնդրո առարկայի առնչությամբ հայտնեց, թե համայնքի վարչական տարածքը սկսվում է արջի քանդակի վերելի մասից, ասել է թե տարածքը կարգի բերելն իրենց գործը չէ: Փորձեցինք պարզաբանում ստանալ «Կապանի ճանապարհների շինարարություն եւ շահագործում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից, որի գլխավոր ճարտարագետ Սերգեյ Առուստամյանը հայտնեց, որ իրենք սպասարկում են միջպետական մայրուղին, ջրահեռացման առուները: Սիս ալյուրի բաներ: Բանից պարզվում է, որ լեռների տիրակալ արջն ինքը պիտի հոգա իր քրի տակ գոյացած աղբատեղիի մաքրության հարցը:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Ի գիտություն

«Այունյաց երկիրը», Կապանի նախկին քաղաքապետ Արտուր Աբայանի հովանավորությամբ, պատրաստվում է ընթացիկ տարում հրատարակել հատուկ համար՝ նվիրված բոլոր ժամանակների ամենաշանավոր կապանցուն՝ Մովսես Այունեցուն (Տաթևացուն, Խոտանանցուն), ով մեր ազգային-եկեղեցական կամոնացված վերջին սուրբն էր, Ամենայն հայոց 101-րդ կաթողիկոսը, տիեզերահռչակ եւ բազմապատիկ լուսավորիչը հայոց, վերստին նորոգողն ու վերածնողը Սուրբ Էջմիածնի, քաջ ռաբունապետն ու անհաղթ փիլիսոփան, ով նոր դարազուլուխ բացեց Հայ առաքելական եկեղեցու պատմության մեջ, ով հաջողեց պարսկական եւ օսմանյան գերությունից փրկագնով ազատել մոտ չորս հազար հայ մարդ:

Սույն նախածեռնությանն աջակցելու պատրաստա-

կամություն է հայտնել Այունիքի մարզպետարանը: Խմբագրությունն այդ նպատակով համագործակցում է Երեւանի Մերոպ Մաշտոցի անվան մատենադարանի, Երեւանի պետական համալսարանի համապատասխան ամբիոնների, Հայ առաքելական եկեղեցու Այունյաց թեմի հետ:

Խմբագրությունը միաժամանակ համագործակցության է հրավիրում մարզի բարձրագույն եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, հանրակրթական դպրոցների համապատասխան մասնագետներին:

Խմբագրությունը նաեւ հայտարարում է գեղանկարի մրցույթ Մովսես Այունեցու (Տաթևացու) դիմանկարի պատրաստման համար: Լավագույն գեղանկարը կգնվի հեղինակից եւ կներկայացվի թերթի տվյալ համարում:

«Այունյաց երկիր»

Այունյաց երկիր

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Հիմնադիր եւ ՀԻՐԱՏԱՐԱՎԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱԾՈՒԿ ՊԱՏԱՏԻՄԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
 Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 80 47, (077) 45 90 47:

Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
 Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակների չեն վերադարձվում:

Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել:

Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՆՎԱՐԻ - ԾԱՆՈՒԹՅՈՒՆ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:

© Նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրմանը՝ 2000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 22.01.2015թ.: